«Այս բոլորի հետևանքով վրաց իշխանութեան տակ ապրող կէս միլիոն հայ ազգաբնակութիւնը զրկուեց ամէն իրաւունքից, նրա պատիւը, ունեցուածքը, ազատութիւնն ու գոյքը դարձան միլիցիայի և յատուկ զօրամասի պաշտօնեաների ազատ քմահաճոյքի առարկայ»: «Այն պատրուակով, որ, իբր թէ, Արամեանի չէնքում, ուր Հայ. Ազգ. Խորհրդին կից տեղաւորուած էին և մի շարք ուրիշ հիմնարկութիւններ, կատարւում է կամաւորների արձանագրութիւն յօգուտ Հայաստանի, կնքուեցին Հայ. Ազգ. Խորհրդի տոմարները և դրաւեցին նրա բոլոր նիւթական միջոցները և գաղթականներին յատկացուած դեղերն ու դրամները»: Եւ Ազգ. Խորհուրդը փաստօրէն դադարեց գոյութիւն ունենալուց:

«Ահա երկու շաբաթ է, որ Թիֆլիսի հայ բնակչութիւնը ենթակայ է վարչական իշխանութեան ամէն տեսակ կամայականութեանց: Զինուած միլիցիոներները դիշերները այցելում են, առանց հպատակութեան ու դիրքի խտրութեան, հայերի տները, բնութիւններ են գործ դնում, առնում–տանում են թանգարժէք իրեր, ձերբակալում են ոչ միայն ոչ հայահպատակ, այլ և վրացահպատակ անձանց. ցերեկով չուրջկալներ են կատարում և հայերին հարիւրներով քշում են բանտ ու Քութայիսի նահանգը՝ առանց նոյնիսկ հնարաւորութիւն տալու դէթ մնաս–բարև ասելու իրենց հարազատներին ու անհրաժեշտ իրեր առնելու. հազարաւոր հայ բանւորներն ու մտաւորականները, որոնց հանում են գործից և ուղարկում Մեթեխի բերդը կամ՝ միջնադարեան բանտերի վատագոյն կարգերով դերիների կայանի վերածուած Ներսիսեան դպրոցի չէնքը — սովորական երևոյթներ են դարձել Թիֆլիսի հայերի կեանքում: Այդ բոլորին զուգընթաց, տեղի են ունենում բոլորովին անմեղ մարդկանց ձերբակալութիւններ՝ դրամ կորզելու նպատակով. մերժման կամ իշխանութեան յայտնելու պարագային սպառնում են դնդակահար անել: Այլասերման աստիճանի մասին կարելի է գաղափար կազմել նրանով, որ միլիցիոներները և յատուկ զօրամասի պաշտօնեաները հաստատել են փրկագնի որոշ սակ՝ 50–ից սկսած մինչև 50,000 ռուբլի, և սակաւ չեն դէպքեր, երբ միևնոյն անձին հերթով դիմում ու դրամ են պահանջում երկու հիմնարկութեան ներկայացուցիչներն էլ, և եթէ միամիտը յայտնի, թէ ինքը արդէն տուել է, այդ փաստն ինքնին ամրացնում է նոր պահանջողի իրաւունքը»:

Այս բոլորի թագ ու պսակ եղաւ յունւ. 5–ի այլանդակ դէպքը, երբ, կնքուած զինադադարից յետոյ արդէն, Թիֆլիսում տեղի ունեցան հայերի զանգուածային ձերբակալութիւններ: «Միլիցիայի գործակալները, գրում էր Վ. Ազգ. Խորհուրդը, վայրենիների պէս, բառիս բուն նշանակութեամբ, որսի ելան հայերի դէմ. մի քանի ժամւայ մէջ ձերբակալեցին 6000 հոգի և ազատ թողին այն մի քանի հարիւր բախտաւորներին, որոնք տեղն ու տեղը, մարդկանց աչքի առջև, կարողանում էին վճարել պահանջուած գումարը կամ, հնարաւորութիւն էին ստանում, միլիցիոներների ուղեկցութեամբ գնալ տուն և աւելի մեծ գումար վճարելով՝ ազատուել բռնակալների ձեռքից»:

«Եւ եթէ այս ամենը կատարւում էր Թիֆլիսում, դժուար չէ երևակայել հայերի վիճակը Վրաստանի գաւառներում, որոնք թողնուած են սեփական ճակատագրին և վրաց մամուլի հակահայ քարոզչութեան ոգով տոգորուած տեղական վարչութեան ողորմածութեան»:

Անկասկած, գաւառներում, աւելի վատ էր, քան Թիֆլիսում: Ապօրինութիւններից, թալանից ու բանտարկութիւններից զատ այնտեղ տեղի էին ունենում և լկումներ ու սպանութիւններ, մանաւանդ ժողովրդական